

ԿՈԶԵՐՈՒ ՌԱԶՄԱԴԱՇՏ ԿԱՄ ՄԻԱՑՈՒՄԻՆ ՆՈՐ ԴԷՄՔԸ

Յայտնադէս, պատերազմը շատ հեռա-
ւոր մէկ մոլորակն էր արեգակնային մեր
դրութեան. կատարեալ արտերկրացի մը
որուն ո՛չ իսկական դէմքը մեզի ծանօթ
էր, ոչ ալ լեզուն կը հասկնայինք: Մինչ-
դեռ... կորուստներու այն հաստափոր
հատորը զոր «Հայոց պատմութիւն» կը
կոչենք, մինչեւ այսօր տասն անգամ պէտք
է ըսած, աղաղակած ըլլար թէ այդ հե-
ռաւոր անծանօթը մեր միակ դաշնա-
կիցն ու բարեկամը նկատելէ ուրիշ մի-
ջոց չունէինք, պահելու համար «աղղ»
նկատուելու անհրաժեշտ փշրանքները:
Ղարարազը այդ խմացութեան փորձա-
դաշտն էր նաև. փորձաքարը՝ թէ հաս-
կըցա՞ծ, կամ դո՞նէ յա՞ծ ենք կորուստ-
ներու աղաղակը:

Եւ մինչ ներսն ու դուրսը, մեր թերթե-
րուն, սրահներուն, սենեակներուն մէջ,
կամ սրճարանը, փողոցը, օրուան պա-
տահարները խօսելու, վիճելու, դան-
դատելու նիւթ կու տային մեզի, չնըշ-
մարեցինք թէ փորձագաշտին վրայ ամ-
բարտաւան պարտութիւն մը ձգած, կը
հեռանայինք: Կը հեռանայինք պատմու-
թենէն, ներկայէն, պարտաւորութիւննե-
րէ, թշնամիէն ու ազատ կամքով, զը-
րեթէ հպարտ, կը դիմէինք կործանու-
մին:

Պետութիւն կայացնելու, կայունացը-
նելու խայճը, Շահումեանի, Արծուա-
չէնի, Մարտակերտի ու մեծ ու փոքր դա-
րարազեան դիւզերու ա՛լ առօրեայ դար-
ձած կորուստները, անոնց «ինչպէս»-ին
ու «ինչու»-ներուն փնտռտուքը յապա-
ղեցուց մեզ. ուչ անդրադարձուց թէ
միակ յանցաւորը մեր դրութեան «արտ-
երկրացի»՝ պատերազմը չճանչնալու, ա-
նոր մտերմացած չըլլալու մեր յամառու-
թիւնն էր:

Այլապէս, հայ իշխանաւոր մը ուժը
պիտի չդտնէր երբեք յայտնելու թէ պե-
տութեան հրահանգած զօրակոչը ձախո-
ղած է եւ թէ խուսափողներուն համար
միջոցներ պէտք է ձեռք առնուին, եւլն-
եւլն. եւլն.: Հայ մամուլին մէջ տեղ
պիտի չդտնէր Մարտակերտէն դաղթակա-
նի մը վկայութիւնը թէ այսինչ դիւզին
պաշտպանութեան համար պահանջուած
դէնքերը հասած էին վերջին Հայուն դիւ-
զին հեռանալէն ետք:

Եթէ անծանօթ մնացած չըլլայինք
պատերազմի իրողութեան, պիտի դիտ-
նայինք թէ անոր օրէնքներուն մէջ կոչե-
րը ոչ տեղ ունէին, ոչ ալ իմաստ: Մինչ-
դեռ, վերջին շրջանին, քանի՛ կը սեղ-
մուի օղակը, անոնք իրարու կը յաջոր-
դեն հայաստան մամուլին մէջ. առ-
նուազն տարօրինակ ու մանաւանդ ամօ-
թալի չէ՞ որ պետական զօրակոչին ձա-
խողելէն ետք քաղաքական կուսակցու-
թիւն մը (ՀՀԾ) կոչ ուղղէ երիտասարդու-
թեան որ ճակատ երթայ. կամ Հայու ար-
ժանապատուութեան յարիր բա՞ն է հաղ-
բութիցի կիներու կոչը որոնք իրենց դա-
ւակներն ու այրերը պայքարելու կը կան-
չեն. մենք որ այնքան կը սիրենք յաճախ
ոչ շատ խոհեմ մեր առաջնութիւններով
հպարտանալ, այնպէս կը թուի որ հրա-
ւիրադրով պատերազմ մղելու նորարա-
րութիւնն ալ պիտի աւելցնենք այդ շար-
քին:

Առօրեայի ընթացիկ արձագանգներ
կարդալու պէս կը կարդանք օրինակ, հե-
տեւեալ տողերը. «Բագմաթիւ հայ մար-
տիկներ այս տարուայ Մայիսի վերջեր-
րին պատերազմը աւարտուած համարեցին
եւ ինչպէս կամաւոր զինուորագրուել եմ,
կամաւոր էլ գօրացրուեցին: Թափուր տե-
դերը անմիջապէս շլրացուեցին» («Հայֆ»,
Օգոստոս 26): Կամ կը կարդանք նոյն
անխոռով հանդարտութեամբ թէ Ղարա-
բազէն Հայաստան դաղթականներու հոս-
քը չի դադրիր: Կը կարդանք ու կը դար-
ձընենք էջը, աւելի հետաքրքրական բա-
ներ գտնելու յոյսով. կը կարդանք ու
կ'անցնինք. ներսի Հայը, ինչպէս՝ դուր-
սինը. նախարարը, նախադահը, հրամա-
նատարը, ինչպէս՝ ընդդիմութիւնը, ինչ-
պէս՝ մտաւորականը, ինչպէս՝ փողո-
ցի աւելածուն:

Անբնական բան մը չունի՞ր այս ընթացքը որ իրականութեան մէջ հոմանիշ է փառաւոր տեղքայլի մը. իրականութիւնը, աշխարհին օրէնքները նոյնքան հեռու են մեզմէ կամ աւելի ճիշդը՝ մենք անոնցմէ, որքան՝ եղան անհամար այն շրջաններուն, որոնք կորուստներու աւետարան դարձուցին մեր Պատմութեան գիրքը:

Անդորութեան ամօթալի ասպարոյց այս կոչերէն, զոհերը իւրացնելու եւ փառարանելու մրցումէն, կորսուած ամէն մէկ զիւզի, դաշտի առիթով թշնամիին անբարոյականութիւնը, անօրինութիւնը, խժոժութիւնը մատնանշելէ այլ բան չե՞նք կրնար ընել: Գոնէ սլաւասխանատու անձերու հետ կատարուած հարցազրոյց-

ներ, կամ անոնցմէ մէկուն, միւսին ելոյթները չաւարտէին յաղթանակի մը վստահութեան արտայայտութիւններով. մարդիկ ի՞նչպէս չեն անդրադառնար որ վստահութիւններ, հաւատքներ ոչ ոքի բան մը կ'ըսեն շրջանի մը երբ լրասփիւռները ճիշդ հակադիր իրականութիւններու կ'արձագանդեն:

Ամէնէն վախ սլաւոճառողը այն է որ սթափելու տրամադրութեան բացարձակ այս բացակայութեանը ի վերջոյ պիտի ծափահարենք կէս-միացումը. եթէ Արցախի միութիւնը վրիպի, յաջողած պիտի ըլլանք գոնէ Արցախցին Հայաստանին միացնելու գործին մէջ. արդէն ատոր նախերգակը չե՞ն Ղարաբաղէն Հայաստան ձգուած գաղթականի շարանները: Հոգ

չէ թէ անոնք այսօր տուն չունին, տեղ չունին, ակնկալուած նեցուկը չեն դրոներ, երբեմն նոյնիսկ ետ դարձի կը պարտադրուին դէպի ումրակոծուող շրջաններ...: Ոչի՛նչ: Այս ալ կ'անցնի կ'երեւի ու վաղը անոնք ալ կը բնակուին Երևան, Մոսկուա, Կրասնոդար, Փարիզ, Լոս - Անճըլլես կամ այլուր, երբեմն յիշելով իրենց թթենիները ու անիծելով Հայուն դժխեմ բախտը, թշնամի դրացին կամ երկրին աշխարհադրական աննըստ սատ գիրքը: Մինչ ուրիշներ կը շարունակեն փառարանել Հայոց պետականութեան վերածնունդը, կրկնելով թէ յաղթանակը անսլայմա՛ն մերը կը լինի...:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ